

ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԵԹՈՒՄ Ա ԹԱԳԱՎՈՐԻ ՌՈՍԼԻՆՅԱՆ ԱՎԵՏԱՐԱՆԻ  
ՆՈՐԱՀԱՅՏ ՄԱՍՈՒՆԷՆԵՐԸ

Ա

Մեր ձեռագրերը իրարից տարբերվում են նաև իրենց ճակատագրով։ «...Իսկ զսա մերկացեալ ի հարսնագեղ վայելչութեանց եւ յոսկիակուռ պայծառութեան, կողոպտեալ յանաւրինաց եւ արհամարհեալ տեսողաց, թաւալեալ աճիւն մոխրակուտաց եւ կար աջ կարկառման ձեռին ընթերցողաց, գրեթէ լոկեալն լայր, ձայն տալով ստացողին եւ ոչ ուրեք դառներ...»<sup>1</sup>։ Փրկության այս հիշատակարանը պատկանել է սելջուկյան արշավանքների ժամանակ թալանված ու դեն շարտված մագաղաթյա, երկաթագիր մի մատյանի, որից մեզ է հասել հիշատակարանի սույն պատառիկը, որպես պահպանակ XV դարի մի ձեռագրի։

Հեթում Ա թագավորի Ավետարանը, շնայած այլազգիների ձեռքից փրկվել է 1900 թ. և Մատենադարան է մուծվել Աղթամարից բերված ձեռագրերի հետ Մեծ եղեռնի տարում, իր եղեռնը ապրել է դրանից ուղիղ հինգ հարյուր տարի առաջ՝ 1400 թ., Լենկ-Թեմուրի երրորդ աշխարհավեր արշավանքի ժամանակ։ Եվ նա ոչ միայն «մերկացված» և «կողոպտված» է եղել օտարազգի հրոսակներից, այլ խոշտանգվել է բարբարոսաբար, թրատվել ու կտրատվել է թերթ առ թերթ, նկար առ նկար։ Երբ վասպուրականում Հովհաննես քահանան տեսել է «զայսպիսի ահարկու և սոսկալի Աւետարանս այսպէս փեռակտած անկեալ ի ձեռս այլազգեաց, որպէս զգառն ի գայլոյ ձեռն մատնեալ»<sup>2</sup>, — ավելի քան շորս հարյուր թերթանոց փառահեղ ձեռագրից միայն հարյուր տասնյոթ թերթ էր մնացել, որից ութսունմեկը՝ կտրատված ու կիսապատառ, իսկ երեսունվեցը՝ թեև ամբողջական, բայց՝ դաշունահար։

Մագաղաթյա, երկաթագիր, հարուստ և շքեղ նկարազարդված ձեռագիրը իր խոշտանգված թերթերի էջերում պահել էր լուսանցադարձեր, զարդագրեր, երկու լուսանցանկար և հիշատակարանի սկզբնավորությունը, որից իմացվում էր, որ այն գրվել է 1266 թ. Հռոմկլայում, թագավորի հրամանով և ծախսով։ Տարիներ անց ձեռագրի փրկող Հովհաննեսը անմիջապես ձեռնամուխ է լինում Ավետարանի նորոգմանը՝ «զի թագաւորական յիշատակս, որ աստ գրեալ կա, ոչ խափանեսցի»<sup>3</sup>։ Իսկ գրիչի և նկարչի մասին պետք է իմացվեր նրա ստեղծումից շուրջ յոթ հարյուր տարի հետո և ձեռագրից հետո, հայ ձեռագրական

1 Մատենադարան, ձեռ. № 10147, պահպանակ։

2 Մատենադարան, ձեռ. № 5458, էջ 100ա։

3 Մատենադարան, ձեռ. № 5458, էջ 100ա։

մշակույթի մեծ երախտավոր Գարեգին Հովսեփյանի ջանքերով: Անվանի գիտնականը, ուսումնասիրելով աշխարհասփյուռ հայերեն մանրանկարչական ձեռագրերի մեծ մասը, հանգեց այն եզրակացության, որ Հեթում Ա թագավորի Ավետարանը, որի մնացորդները գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում և կրում 5458 համարը, գրված և նկարազարդված է եղել հռչակավոր մանրանկարիչ Թորոս Ռոսլինի ձեռքով: «Ռուբինյանց մեր թագավորներն ու թագուհիները, իշխաններն ու իշխանուհիները, գրեթե բոլորն էլ իրենց հիշատակներն ունեն գրչության և մանրանկարչության մեջ... բայց չունենք նման հիշատակներ Հեթում Ա-ի կողմից: ...Սպասելի էր, որ Հեթում Ա, նաև իր բարեպաշտ թագուհին Զապել, իրենց հիշատակն ունենային այդ մարզում:

...Թիվ 5458 Ավետարանի մեջ պահված են Հեթում Ա-ի գրել տված մի ձեռագրի բավական մնացորդներ, որոնցմով կարող ենք գաղափար կազմել նրա գրչության և մանրանկարչության մասին, նաև որոշել գրիչն ու նկարիչը»<sup>4</sup>: Այս Թորոս Ռոսլինի մի քանի ձեռագրերի և Մատենադարանի № 5458 ձեռագրերի մագաղաթյա թերթերի մանրանկարչության և գրչության, ինչպես նաև հիշատակարանների համադրությամբ և քննությամբ, Գ. Հովսեփյանը ցույց է տալիս, որ Մատենադարանի № 5458 ձեռագրի 38 (պետք է լինի 39) մագաղաթյա թերթերը Հեթում Ա թագավորի համար գրված Ավետարանի մնացորդներն են և որ նրանց գրիչն ու նկարիչը Թորոս Ռոսլինն է<sup>5</sup>: Հայ մանրանկարչության խոշոր գիտակ Սիրարփի Տեր-Ներսեսյանը Վաշինգտոնի Ֆրեերի<sup>6</sup> և Բալթիմորի Վալթերսի<sup>7</sup> հավաքածուներին (որոնց մեջ համապատասխանաբար №№ 3218 և 539 ձեռագրերը Թորոս Ռոսլինին են) նվիրված աշխատություններում, խոսում է նաև Մատենադարանի № 5458 ձեռագրի մագաղաթյա թերթերի մասին՝ որպես Թորոս Ռոսլինի գրչի և վրձնի գործ, և գտնում է, որ Ֆրեերի պատկերասրահի Ավետարանը (հիշատակարան չունի), որը պատկանել է Վասակ արքաներին, չափերով, գրելաձևով, նկարների դասավորությամբ, լուսանցազարդերով և այլն, ավելի նման է Հեթում Ա-ի Ավետարանին և ժամանակով մոտ է նրան<sup>8</sup>:

Մ. Տեր-Մովսիսյանը<sup>9</sup>, Գ. Հովսեփյանը և Ս. Տեր-Ներսեսյանը, ինչպես նաև Լ. Ազարյանը<sup>10</sup>, Լ. Խաչիկյանը<sup>11</sup> և Ա. Գևորգյանը<sup>12</sup> իրենց աշխատություններում և հոգվածներում ավելի ճանաչելի դարձրին Թորոս Ռոսլինին, և նա այլևս դադարեց անհարկի կերպով այս կամ այն նշանավոր նկարազարդ ձեռագրի հեղինակ համարվելուց: Այս բանին օգնեցին նաև վերջին տարիներին

<sup>4</sup> Գ. Հովսեփյան, Հեթում Ա-ի նկարազարդ Ավետարանի մնացորդները, «Պայքար», 1949, էջ 7—8:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 8—11:

<sup>6</sup> *Strarpie Der Nersessian*, Armenian Manuscripts in the Freer Gallery of Art, Վաշինգտոն, 1963 թ.:

<sup>7</sup> *Notes on Armenians Manuscripts in the Walters Art Galleries*, Բալթիմոր, 1973 թ.:

<sup>8</sup> Սիրարփի Տեր-Ներսեսյան, նշվ. աշխ., էջ 31, 42—43:

<sup>9</sup> Մ. Տեր-Մովսիսյան, Հայ մանրանկարներ, «Ազգագրական հանդես», 1910, № 2:

<sup>10</sup> Լ. Ազարյան, Կիլիկիայի մանրանկարչությունը XII—XIII դդ., Երևան, 1964 թ.:

<sup>11</sup> Լ. Խաչիկյան, Թորոս Ռոսլինի ձեռագրի վերջին հանգրվանը, «Գարուն», Երևան, 1976, № 4, էջ 56—62:

<sup>12</sup> Ա. Գևորգյան, Հեթում III թագավորի Ավետարանը, «Բանբեր Մատենադարանի», № 8, Երևան, 1967, էջ 143—156:

Մատենադարանին նվիրաբերված Թորոս Ռոսլինի 1256 և 1268 թվականներին գրած և նկարազարդած ձեռագրերը:

Պրպտումների ընթացքում մեզ հաջողվեց հայտնաբերել Հեթում Ա թագավորի ոտսլինյան Ավետարանի հիշատակարանից մասունքներ, որոնց հրապարակումը կրկին առիթ տվեց անդրադառնալու Մատենադարանի № 5458 ձեռագրին: Բանն այն է, որ քննողների ուշադրությունից վրիպել է ձեռագրի նորոգման հիշատակարանը, որի հետևանքով սույն ձեռագիրը համարվել է ոչ թե Հեթում Ա-ի Ավետարան, որը նորոգվել է հետագայում, այլ որպես հետագա դարերում գրված ձեռագիր, որի մեջ օգտագործվել են Հեթում Ա թագավորի Ավետարանի մնացորդները: «Հեթումի Ավետարանի մնացորդները, բոլորն էլ Հովհաննու մասեր,— գրում է Գ. Հովսեփյանը,— օգտագործված են համապատասխան տեղերում, ընդամենը 38 թերթ<sup>13</sup>, բայց ոչ իրար շարունակություն... օգտագործող գրչի անձն ու ժամանակը անհայտ է, կարող է ժե—ժՁ դարում լինել... Մարկոսի կեսից սկսած՝ մանրանկարչական գլխագրերը և լուսանցքի զարդերը կպցված են համապատասխան տեղերում Հեթումի Ավետարանից առնելով»<sup>14</sup>:

Դեռևս 1928 թ., նույն կարծիքն է հայտնել Ե. Նիկոլսկայան Հովհաննես խիզանցուն նվիրված ուսումնասիրության մեջ<sup>15</sup>: Այդ կարծիքին է նաև Ի. Դրամոսյանը<sup>16</sup>:

Հիշյալ հանգամանքի անտեսումը անհասկանալի է դարձնում ձեռագրի այժմյան վիճակը (ինչո՞ւ են կտրատել լուսանցազարդերը և փակցրել թղթի վրա) և կոծկում նրա պատմությունն ու ճակատագիրը:

## Բ

Մաշտոցի անվան Մատենադարանի № 5458 ձեռագիրն ունի  $23 \times 32,3$  սմ մեծության 312 մագաղաթյա և թղթյա թերթ, որոնց մեջ են մտնում նաև սկզբից և վերջից երկու պահպանակները: Մագաղաթյա 39 թերթերը 19 տողանոց երկսյուն գրություն ունեն,  $24 \times 6,5$  սմ սյունակներով:

Ընթերցվածները սկսվում են զարդագրերով և լուսանցազարդերով կամ լուսանցանկարներով<sup>17</sup>, իսկ առաջին երեք տողերը ոսկեզօծ են: Ոսկեզօծ են նաև բոլոր գլխագրերը, պատվագրված տերունական բառերը, «Հայր» բառը,

13. Թերթերից մեկը՝ սկզբում, մյուսը՝ վերջում գրված են, որպես ձեռագրի պահպանակներ, ընդ որում Մարկոսի Ավետարանից պահպանված միակ թերթը վերջին պահպանակն է, որը, հավանաբար, անտեսել է Գ. Հովսեփյանը:


14. Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 11:

15. Е. Никольская, Рукописи мастера Ованеса из Гизана, Խարկով, 1928, էջ 43:

16. И. Драмнос, Об одном кликийском Евангелии круга Тороса Рослина, Երևան, 1978, Հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիումի նյութերից:

17. Երեսունինը թերթերի վրա նկարված են քսան լուսանցազարդ և զարդագիր միասին՝ ընթերցվածների սկզբում, մի զարդագիր և մի սյունամիջյան զարդ առանձին: Ահա այդ թերթերի տեղը ձեռագրում. թերթ 1 (1), 249—254 (6), 256—258 (3), 260—262 (3), 277 (1), 279—282 (4), 284 (1), 286—296 (22), 298—301 (4), 306 (1), 308—310 (3), 312 (1), ընդամենը 39 թերթ: 1, 250 և 253 թերթերը մասամբ լրացված (կարկատված) են թղթով: Ահա լուսանցազարդերը և զարդագրերը միասին. թերթ 249, 250, 254, 257, 258, 260, 261, 277ա, բ, 279, 220ա, բ, 282ա, բ, 284, 287, 288, 299, 306, 309: Մի զարդագիր գտնվում է 289 թերթի և մի սյունամիջյան 262 թերթի վրա:


համարարբանների թվերը, լուսանցքներում նշված որոշ բաների թարգմանությունները և առաջին տողի զլխագրին կից զարդագծերը: Մագաղաթյա թեր-



թերից Երեսունութը Հովհաննու Ավետարանի տարբեր մասերից են, որն ա-վարտվում է 310ա էջում: Թերթի մյուս Երեսուն ձեռագրի թերի հիշատակա-րանն է:


Ձեռագրի թղթյա մասում է գտնվում նորոգման հիշատակարանը.

«Քրիստոս Աստուած քո սուրբ աւետարանչաց բարեխաւսութեամբս ողորմեա Յովանէս քահանային և ծնաւդաց իւրոց և ամենայն արեան մերձաւորացն՝



կենդանեացն և հանգուցելոցն, որ յոյժ եռափափազ սրտիւ ետ նորոգել զսուրբ Աւետարանս, վասն զի ոչ ժուժեաց տեսանել զայսպիսի ահարկու և սոսկալի Աւետարանս այսպէս փեռակտած անկեալ ի ձեռս ալիւղգեաց, որպէս զգառն

ի գալլոյ ձեռն մատնեալ, ետ վերստին նորոգել զառ, զի թագաւորական յիշատակս որ աստ գրեալ կա, ոչ խափանեցի:



...զԱստուածատուր քահանայն և զծնողսն իւր յիշեցէր ի Քրիստոս, որ զայն զատարն զինչ ոսկովն է, ձրի շնորհեաց: Եւ զսուտանուն գրիչ, որ անուամբ չեմ յիշման արժանի, և զծնաղսն իմ և զամենայն արեան մերձաւորս աղաչեմ

ձեզ յիշելի ի Տէր, և Աստուած ողորմի ասել, և Աստուած զձեզ տացի զիւր առատ ողորմութիւնն»<sup>18</sup>:

Ավետարանը նորոգել է ամէլ Հովհաննէս քահանան, իսկ Աստվածատուր քահանան նրան օգնել է: Ձեռագրի սկզբից 116 (2—117), այնուհետև տարբեր տեղերում 87 դեղնավուն և հաստ թերթ է ավելացված<sup>19</sup>: Պահպանելով մագաղաթյա թերթերի սյունակների շափն ու տողերի քանակը, զրիշը ավելացված թերթերը գրել է խոշոր բոլորգրով, գլխադրերը՝ կարմիր երկաթագրով, իսկ ընթերցվածներն սկսել է միագույն զարդագրերով և լուսանցազարդերով: Նրկարել է շորս ավետարանիչների նկարները<sup>20</sup> և ավետարանառջների կիսախորանները՝ գլխազարդով, զարդագրերով և լուսանցազարդերով: Այս ամենը կատարել է Հովհաննէս Խիզանցին, 1401 թվականին:

Սակայն նորոգողների կատարածը միայն այն չի եղել ինչ այժմ տեսնում ենք հակառակ: Հաջորդ նորոգումը, որ կատարվել է XV դարի վերջին, «սրբագրել» է առաջինների աշխատանքը:

Ձեռագրում մագաղաթյա և առաջին նորոգման թերթերից բացի գտնվում են նաև սպիտակ, ավելի ամուր 77 թղթյա թերթեր, գրված բոլորգրով<sup>21</sup>: Տողերը անհավասար են, ջանացել են արտադրվող նյութը տեղավորել նույն թերթերի վրա<sup>22</sup>: Ընթերցվածների սկզբում սոսնձել են բուն մագաղաթյա ձեռագրի թերթերից կտրած լուսանցազարդերը և զարդագրերը, իսկ երբ նրանք միասին չեն պահպանվել, իրար մոտ են բերվել տարբեր տեղերից մի զարդ և մի զարդագիր:

Առաջին նորոգողները հռչակված ձեռագիրը նորոգել են ամբողջությամբ, այսինքն ավելացրել են պակաս թերթերը, և լրացրել կիսատ թերթերը<sup>23</sup>: Իսկ երկրորդ նորոգողները ձեռագիրը արտաքինապես ավելի կոկ տեսնելու ցանկությամբ, ձեռագրից անջատել են թղթով լրացված մագաղաթյա թերթերը և նրանց փոխարեն ավելացրել նոր թուղթ համապատասխան բնագրով: Անջատված թերթերից կտրել-հանել են միայն ամբողջական զարդագրերը, լուսանցազարդերը, սյունամիջյան զարդերն ու նկարները և ամրացրել նոր մուծված թերթերի համապատասխան տեղերում<sup>24</sup>:

18 Մատենադարան, ձեռ. № 5458, էջ 106ա:

19 Ձեռագրում այդ թերթերն ունեն այսպիսի տեղադրություն. թերթ 2—117 (116, 1 թերթը մագաղաթյա պահպանակն է, որ համարակալվել է), 141—176 (36), 196—217 (22), 236—243 (8), 302—304 (3) և ինը մեկական թերթ (255, 259, 269, 270, 276, 278, 283, 297, 307):

20 Մաթևոս 2բ, Մարկոս՝ 100բ, Դավթա՝ 155բ, Հովհաննէս՝ 242բ:

21 Ահա նրանց տեղադրությունը. թերթ 118—127 (9), 130—140 (11), 177—195 (19), 218—235 (18), 244—248 (5), 263—269 (6), 271—275 (5) և 4 մեկական թերթ (144, 201, 285, 305), ընդամենը՝ 77 թերթ:

22 Էջ 201ա (22՝ ա սյունակ, 23՝ բ սյունակ) 201բ՝ 28 տող:

23 Այդպիսի երեք նմուշ պահպանվել է ձեռագրում. 253-րդ մագաղաթի թերթի ամբողջ մի սյունակ լրացված է թղթով և բնագիրը գրված, 250-ի՝ մի սյունակի կեսը, 1-ի ստորին լուսանցը՝ երկու տողով: Ուրեմն առաջին նորոգողները աշխատել են փրկել թագավորական հիշատակը, ջանալով պահպանել նրանից փրկված ամեն մի թերթ ու պատասիկ, գիր ու զարդ: Բռնականաբար, այդ յոթանասուներեք ոտալինյան թերթերի վրա եղել են և կտրված զարդ ու զարդագիր և աղճատված լուսանցանկար, որոնք, սակայն, չեն պահպանել երկրորդ նորոգողները:

24 Այդ ծամանակ թղթյա թերթերին ամրացվել են ոտալինյան զարդերից 53 լուսանցազարդ (որից 4-ը հետագայում պոկել են), 63 զարդագիր, 5 սյունամիջյան զարդ, որոնք փակցվել են զարդագրերին կից՝ որպես լուսանցազարդ, և սյունակի մեջ արված մի նկար: Ահա նրանց տեղադրությունը. ա. լուսանցազարդ և զարդագիր, միասին. թերթ 118ա, 120բ, 121ա, 122ա, 124բ,

Ամենայն հաժանականությամբ, երկրորդ նորոգման ժամանակ ձեռագրից անջատվել են նաև բուն հիշատակարանի բեկորները, և օգտագործվել որպէս պահպանակներ, որոնք հետագայում անջատվել և տարբեր ճանապարհներով հասել են Մատենադարան: Սույն թերթերի որպէս պահպանակ օգտագործելու պարագան ենթադրել է տալիս, որ երկրորդ նորոգման ժամանակ անջատված մագաղաթյա թերթերից շատերը, հնարավոր է, որ նույնպէս օգտագործվել են այդ նպատակով: Ուրեմն չի բացառված Հեթում Ա թագավորի Ավետարանի նոր մասունքների հայտնաբերումը:

## Գ

Մաշտոցի անվան Մատենադարանի № 1454 պատառիկը մագաղաթյա ձեռագրի հիշատակարանի մաս է, ունի 21,5×13 սմ և 21,8×15,8 սմ մեծության երկու թերթիկներ, որոնք ժամանակին առանձին-առանձին երկատվել են և դարձել փոքր չափսի ձեռագրի սկզբի և վերջի պահպանակներ: Հետագայում անջատվել են ձեռագրից: Մատենադարանի պատառիկների հավաքածու է մուծվել որպէս Ճաշոցի շորս թերթանոց պատառիկ: Թերթիկներից մեկի վրա կա այսպիսի մի գրություն. «Այս թերթերն ետ ինձ Մանուկ աղա էնկեջեան, ի Բաղէշ, 1881, յուլիս» 17»: Գրությունից երևում է, որ գրողը Ղևոնդ Փիրղալիմյանն է: Հիրավի, 1881 թ. հուլիսի 1-ին Փիրղալիմյանը Բաղէշի Ամրդոլու վանքում էր գտնվում և արտագրում էր վանքի ձեռագրերի հիշատակարանները<sup>25</sup>:

Թե ինչպէս է այն բնկնում էջմիածնի Մատենադարան, հայտնի չէ: 1898 թ. «Լուծալում» «Պատառիկ» խորագրով տպագրվում է նրա բովանդակությունը, այսպիսի ծանոթագրությամբ. «Մատենադարան, մագ. 4 թերթ, առաջին և վերջին թերթերի մասերը պատռված, փոքր երկաթագիր»: Պատառիկը հրատարակված է ոչ ճիշտ հաջորդականությամբ և որոշ բառերի ոչ ճիշտ վերծանությամբ<sup>26</sup>:


Ուրեմն Մատենադարանի № 1454 շորս թերթանոց պատառիկը՝ երկու թերթ է, յուրաքանչյուրը՝ երկսյուն գրությամբ, և տասական տողերով: Պատա-

125ա, 130ա, 130բ, 132ա, 133ա, 134բ, 135բ, 138բ, 140ա, 177բ, 178ա, 181ա, 182ա, 183բ, 185ա, 186բ, 189ա, 190բ, 192ա, 193բ, 196բ, 219ա, 222ա, 223բ, 227ա, 228ա, 229ա, 229 բ, 231բ, 235ա, 244ա, 244բ, 245ա, 245բ, 247ա, 247բ, 248ա, 263բ, 264ա, 265ա, 267ա, 267բ, 272ա, 273բ, 274բ: Հետագայում պոկոտված են 123ա, 182բ, 225ա, 266բ, էջերի լուսանցադարձերը: Սյունամիջյան դարդերը օգտագործվել են որպէս լուսանցադարձ 177ա, 137ա, 137բ, 193ա, 265բ էջերում: Միայն զարդագիր ունեն 119բ, 226բ, 227բ, 267բ էջերը, միայն լուսանցադարձ՝ 178ա էջը և նկար՝ 235բ էջը:

<sup>25</sup> Մատենադարան, ձեռ. № 4515, էջ 85: Մատենադարանի № 5317 ձեռագրի 88ա էջում, սովորական մատիտով, գրված է հետևյալ հիշատակագրությունը. «Յամի Տեառն 1881, ի յունիս 5, յաւուր հինգշաբթի, մինչ զնայի բնդ արժանապատիւ Արիստակէս վարդապետի ի Բաղէշ, հանդիպեցաք ի Սպիտակ անուն վանս, որ է շինեալ յանուն Սրբուհոյ Աստուածածնի ի զաւտի Ռշտունեաց: Արժանապատիւ վանահայրն ուխտին հիւրասէր տէր Մխիթար վարդապետ Պառակենց զմեզ հիւրասիրեալ պահաց աստ զայն գէշեր: Արդ մինչ քնթեոնուք, յիշեցէք զնուստ Ղևոնդ վարդապետ»:


<sup>26</sup> «Լուծալ», 1898 թ., դիրք Բ. էջ 247—248: Հրատարակվում է ոչ թե պատառիկի էջի սկզբից, այլ երեք տող հետո, և ոչ թե թերթի ա էջից, այլ՝ բ: Փոփանակ «հասութեան», տպված է «հանութեան», և այլն:

որկները երկու տարրեր թերթերի մասեր են, առաջինից պահպանված է ստորին, երկրորդից՝ վերին կեսը, ուստի նրանք անմիջապես իրար շարունակություն



են կազմում: Սյունակների լայնությունը 7,3 սմ է, տողագծերի հեռավորությունը միմյանցից 1,3 սմ, իսկ տառերի բարձրությունը՝ 0,4 սմ: Գիրը՝ գրչագիր է, դեպի աջ շատ աննշան թեքվածությամբ: Օգտագործված է կետ և ստո-

րակետ՝ միասին-տողի ներքևում, զույգ գծիկ՝ տողի վերջում, մի կետ տողի վերևում, նաև վերջակետ և ստորակետ:



Մագաղաթը նուրբ է, բայց քանի որ օգտագործվել է որպես պահպանակ՝ կոշտացել է, տեղ-տեղ սևացել: Առաջին թերթի վերին մասը պատռված է:

Պատանիկն այսպես մանրամասն նկարագրեցինք, որովհետև բոլոր տրված լայները հար և նման են վերը նշված № 5458 ձեռագրի հիշատակարանի տրվ-

յալներին. նույն գրչությունն ու կետագրությունը, սյունակների, տողերի ու տառերի նույն չափսերը, բովանդակության նույնությունը: Այնտեղ, ուր ավարտվում է Հեթում Առաջինի Ավետարանի հիշատակարանի թերթը և նախադասությունը թերի է մնում, պատահիկը այդտեղից լրացնում և շարունակում է միտքը: Այսպես (ձեռագրում), «Հրամանաւ եւ ծախիւք աստուածասէր եւ բարեպաշտ թագաւորին (պատառիկում) Հայոց Հեթմոյ, որ եւ ըստ մեծ յուսոյն իւրոյ, զոր ունէր առ Աստուած, յաւել եւ զայն գրասէր եւս լինել եւ սիրող կարգաց եւ կրանից եկեղեցւոյ եւ նորին խորհրդոց...» և այլն:

Պատառիկում կա նաև ժամանակը հավաստող երկու իրողություն. «Եւ որդին սուրբ արքային զծիրանածին պարոնն Լեոն, որոյ մնանք Աստուծով փրկութեան նորա, եւ զմեծազգի կենակիցն իւր զսրբասէրն Կերան, եւ զդեռաբոյս մանուկն սոցա Հեթում եւ զԲՈՐԲ Իւր»: Ընդգծված առաջին նախադասությամբ ականարկվում է Լեոնի գերությունը, որը տեղի է ունեցել 1266 թվականին<sup>27</sup>: Երկրորդ նախադասությունից երևում է, որ մանուկ Հեթումը այդ ժամանակ մեկից ավելի բույր ուներ: Հեթումի մեծ քույրը՝ Լեոնի և Կեռանի առաջնեկը, ծնվել էր 1262 թվականին, Հեթումը՝ 1265 թ., 1266 թ. ծնվել էր մյուս քույրը՝ Յիմին, իսկ 1269-ին՝ Սպիլը<sup>28</sup>: Այս վերջինս չէր կարող նկատի առնվել, քանի որ 1268 թ. արդեն Լեոնը գերությունից ազատվել էր և ձեռագիրը գրվել էր մինչև ազատվելը: Պատառիկը գրվել է, ուրեմն, 1266—1268 թվականներին: Բայց հայտնի է, որ Թորոս Ռոսլինը «Հրամանաւ եւ ծախիւք երջանիկ հայրապետին Հայոց տեառն Կոստանդեա» 1267 թ. սկսում և 1268 թ. ավարտում է մի Ավետարան և այդ թվականին «մեծ Լեոն, ժառանգ Հայոց զերծեալ եղև խնամաւքն Աստուծոյ երկաթի հալոցացն ի ծառայութենէ և ի ձեռաց արքային Եգիպտացւոց, եւ բազում պատուով և ընծայիւք եկն յաշխարհն և ի հայրենի աթոռ իւր... ի սոյն աւուրս եղև զրաւ գրչութեան սորա, զանազան նիւթաւք և երանգերանգ գունաւք»<sup>29</sup>:

Այսպիսով. 1268 թ. Լեոնի ազատման թվականին Ռոսլինը ավարտում է սույն Ավետարանը, որ սկսել էր 1267 թ., իսկ 1266 թ. երբ ավարտում էր Հեթում Ա թագավորի Ավետարանը, գերել էին Լեոն արքայորդուն: Ուրեմն պատահիկը, ուր ականարկվում է Լեոնի գերությունը, Հեթումի Ավետարանի մասն է, գրված 1266 թվականին:

Որ այդ այդպես է, ավելի լավ համոզում է ձեռագրի հիշատակարանի և պատառիկի միասին ընթերցումը.

Ձեռագիր № 5458

էջ 310բ Փառք եւ երկրպագութիւն, պատիւ եւ զոհութիւն համագոյս  
I սյունակ Սուրբ Երրորդութեանն եւ միոյ աստուածութեանն Հաւր եւ Որդւոյ  
եւ Սուրբ Հոգւոյն:

Շնորհիւն Տեառն սկսեալ եւ ողորմութեամբ նորին յանգ  
Ելեալ աւարտեցաւ մատեանս այս աստուածախաւս, աստուածու-  
նակ, երկրպագելի եւ պաշտելի սուրբ Աւետարանս, յամի երն-

27 «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ., հատոր Ա, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 83:

28 Նույն տեղում, էջ 83:

29 Մատենադարան, ձեռ. № 10675, էջ 330ա, 330բ:

- հարիւր եւ հինգետասներորդի (1266) քառ||բերութեանս Հայ-  
 II ս. կազեան տումարի, յաստուածասրան դղեակս եւ յաշխարհա-  
 մուտ արոսս Հոռմկլա, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչին եւ Սուրբ  
 Աստուածածնին եւ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, ի հայ-  
 րապետութեան աստուածապատիւ տեառն Կոստանդեայ կաթո-  
 ղիկոսի, որ եւ զսրբազան վարուցն իւրոց անհամեմատ ունէր  
 պատ. 1454 զմաքրութիւն, հրամանաւ եւ ծախիւք աստուածասէր եւ բարե-  
 պաշտ քազատրին||Հայոց Հեթմոյ, որ եւ ըստ մեծ յուսոյն իւրոյ  
 I ա. I ս. զոր ունէր առ Աստուած, յաւել եւ զայն գրասէր եւս լինել, եւ  
 սիրող կարգաց եւ կրանից եկեղեցոյ եւ նորին խորհրդոց,  
 տանից տերունականաց եւ սրբոց վկայից:  
 II ս. Որ եւ ///<sup>30</sup> [յ]առատած[իւ]||որպէս ///<sup>31</sup> որութիւն յամե-  
 նայնի: Ուստի եւ իմ անարժանութիւն, քեպէտ եւ ըստ նորին ար-  
 ժանեաց եւ մեծի երախտեացն, զոր ունէր առ իս, ոչ էր բաւա-  
 1 ր. I ս. կան հատուցանել, սակայն ըստ հասութեան ///<sup>32</sup> [պննազար]-  
 դեալ ծաղկ[երանգ բազմա]<sup>33</sup>կերպ պատ[կ]երագրութեամբ, որ-  
 պէս զի ընդ լսելոյ զլուր բանին կենաց, տեսցեն իբրեւ աշաւ  
 իմն զտիպ նախահարցն եւ զփրկագործ տնաւորութիւն բանին  
 II ս. Աստուծոյ մարմնացելոյ վասն ///<sup>34</sup> առաւել ի բազում եկեղե-  
 ցիսն իւր, յորս ինքն կանգնեաց:  
 Վասն զի յատուս սորա եղեւ խաղաղութիւն մեծ աշխարհիս  
 Կիլիկեցոց եւ հանգիստ բոստոնէից, մինչ զի ի բազում աշ-  
 խարհաց ի սրոյ եւ ի գերութենէ ///<sup>35</sup>:  
 2 ա. I ս. Եւ<sup>36</sup> եւս որպէս յիմարեալ ընդ կերողս եւ ընդ արբեցողս ըն-  
 րացայ անառակութեամբ, եւ զի<sup>37</sup>նչ ունիցիմ պատասխանի ի  
 գալստեան Տեառն իմոյ, վասն որոյ զխոստովանութիւն իմ գրով  
 II ս. արձանացուցանեմ եւ աղաչեմ զժառանգատուս ///<sup>37</sup> սրտի նորա,  
 ասելով. Երանի ում բողոքիւն եղեւ մեղաց եւ որ զկնի պատշա-  
 նի: Եւ յիշեցէք աղաւթիւք ի Տէր զարժանատուսն ամենայն բա-  
 րեաց յիշատակի յաստուածասէր քազատրն Հեթում, եւ զբարէ-  
 2 ր. I ս. պաշտ քազունին նորա Զապիլ, դուստր Լեւոնի արքայի ///<sup>38</sup> եւ  
 որդի սուրբ արքային զԹիրանածին պարոնն Լեւոն, որոյ մնանք  
 Աստուծով փրկութեան նորա, եւ զմեծագգի կենակիցն իւր

<sup>30</sup> Այստեղ ավարտվում է առաջին սյունակը, թերթի ստորին մասը կտրված լինելու պատ-  
 ճառով: Շարունակության մեջ թվարկվելու էին Հեթում թագավորի բազմամասնությունները, որ եւ  
 ավարտվում է երկրորդ սյունակի սկզբում:

<sup>31</sup> Թերթի վերին ծայրը պատռված է. երկու տող թերթի է կարդացվում:

<sup>32</sup> Ստորին մասը կտրված է, ուր Ռոսլինը, ինչպես երևում է հաջորդ էջի սկզբից, նշած  
 պետք է լինի, թե ինչու և ինչպես է զարդարելու ձեռագիրը:

<sup>33</sup> Թերթի վերին մասը պատռված է, լրացնում ենք ենթադրարար:

<sup>34</sup> Պակասող սյունակը Հեթումի մասին է, ինչպես երևում է շարունակությունից:

<sup>35</sup> Այստեղ ավարտվում է պատասխանի առաջին թերթը:

<sup>36</sup> Ի տարբերություն առաջին թերթի, որի երկրորդ կեսն էր պակասում, երկրորդ թերթի  
 վերին մասն է կտրված, պահպանվել է երկրորդ կեսը:

<sup>37</sup> Շարունակությունը հաջորդ սյունակի սկիզբն է, որը կտրված է:

<sup>38</sup> Բացակա մասում Լեւոն Բ թագավորի բարեմասնություններն էին թվարկվելու:

զարբասէր Կերան, եւ զդեռաբոյս մանուկ սոցա Հեթում, եւ զֆորֆ իւր:

II ս. Այլ զբարեպաշտունիք եւ զաւրիորդք ///<sup>39</sup> [զԿոստան]դին, աստուածապարգեւ, աստուածապատիւ զաւակաւ իւրաւ, ուստեբաւ եւ դստեբաւ եւ ամենայն ծննդաւ իւրեանց, որոց նրն-ջեցելոցն հանգիստ եւ ողորմութիւն պարգեւեցէ Քրիստոս Աստուած, եւ զկենդանիսն անխռով խաղա[ղութիւն]///»:

Ձեռագիրը և իր հիշատակարանը երկուսն էլ բզկտված, հինգհարյուրամյա անջատումից հետո, վերստին միանում են իրար, ընդ որում նրանք անջատման միշտ գտնվել են Վասպուրականում, իսկ վերջին վաթսունամյակում՝ Մատենադարանի ձեռագրատանը՝ նույն հարկի տակ:

Սույն պատառիկները<sup>40</sup> ոչ միայն մասամբ լրացնում են հիշատակարանը, այլև բացահայտում են ձեռագրի ստացող Հեթում թագավորի և ծաղկող Թորոս Ռոսլինի հետ առնչվող մի շարք կարևոր իրողություններ:

# Դ

Հաստատելով, որ Հռոմկլայում 1266 թ. Հեթում Ա թագավորի համար գրված Մատենադարանի № 5458 ձեռագրի գրիչն ու նկարիչը Թորոս Ռոսլինն է, Գ. Հովսեփյանը գրում է. «...միայն որոշել չենք կարող, թե ինչ առթիվ էր գրված Ավետարանը: Զապել թագուհին շատ վաղուց էր մեռած, 1252 թ., իսկ 1266 թ., «մերձ յաշնան եղանակն» սկսած, սգո տարի էր Հեթումի համար», և ակնարկում է մամլուքների արշավանքը դեպի Կիլիկիա, Երկրի ավարն ու ավերը, և որդիներից մեկի կորուստն ու մյուսի գերությունը<sup>41</sup>:

Սակայն 1266 թվականը հիշարժան էր: Այդ տարի լրանում էր Հեթում Ա-ի ամուսնության, գահակալության և, հետևաբար, Կիլիկիայի Հեթումյան հարստության հիմնադրման քառասուն տարին: 1226 թ. հունիսի 14-ին Կիլիկիայի թագավորության թագապահ Կոստանդինը իր տասնմեկամյա որդի Հեթումին ամուսնացնում է Լևոն Բ թագավորի տասնամյա դստեր Զապելի հետ և հռչակում Կիլիկիայի Հայոց թագավոր: Սկսվում է Հեթումյանների հարստության տիրապետության շրջանը: Եվ ահա, հիսնամյա թագավորը, այս, իսկապես հիշարժան, քառասնամյա հորելյանն էր պատվում այդ շքեղ Ավետարանով:

Հեթում Առաջինը պատվերը հանձնարարել էր ժամանակի ամենահռչակ-

<sup>39</sup> Խոսվել է Հեթումի հարազատների և հոր՝ Կոստանդինի մասին, որի անունից միայն երեք տառ է պահպանվել:

<sup>40</sup> Պատառիկները պատառոտվել են ձեռագրի հետ միասին, և ամենայն հավանականությամբ պահպանվել առաջին նորոգողների կողմից: Երկրորդ նորոգման ժամանակ, երբ միայն ամբողջական թերթերն էին պահում և լրացված թերթերը անջատում ու նորերն էին գրում, երբ նույնիսկ ամբողջական մագաղաթյա թերթը հանվում էր իր տեղից՝ ամրացվում որպես պահպանակ, իսկ նրա փոխարենն նորն էր գրվում, կիսատ-պոստ հիշատակարանը չէին պահ. մասնավորապես որ գտնվում էին ձեռագրի վերջում (Ավետարանի լրացված թերթերը լրացվում էին նաև բնագրով, հիշատակարանը՝ չէր լրացվում): Այդ թերթերը, ինչպես նաև առաջին նորոգման ժամանակ լրացված մագաղաթյա շատ թերթեր կարող էին լինել պահպանակներ, կամ լվացվելով՝ կրկնագրվել: Պահպանակ գտնալու բախտին են արժանանում նաև Հեթումի Ավետարանի հիշատակարանի մասերը:

<sup>41</sup> Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 10:

վածված և իրեն շատ լավ ծանոթ, թերևս մտերիմ, արվեստավորին, Թորոս Ռոսլինին: Վերջինս իր հերթին, աշխատել է իր թագավորի և նրա հարստության քառասնամյակը հավերժացնել բացառիկ շքեղ Ավետարանով: Այստեղից էլ Հեթում Առաջինի Ավետարանի արտակարգ զարգարվածությունը, որի մասին լսում ենք միայն իրենից՝ Թորոս Ռոսլինից, և համոզվում պահպանված սակավիկ թերթերից և վասակ արքեղբոր Ավետարանից:

1265 թ. իշխան Կոստանդին Լամբրոնացու դստեր, տիկին Կեռանի (Կիր Աննա) համար գրված Ավետարանի հիշատակարանում Թորոս Ռոսլինը Հեթում արքային հիշում է որպես «մեծ երեխտեւորի ամենայն Հայոց եւ ազգաց բաղմաց»: 1268 թ. ավարտված Ավետարանում՝ «երախտազործ Հայոց եւ ինձ անարժանիս»<sup>42</sup> ժամանակով դրանց միջև գրված Հեթումի Ավետարանում գրում է. «Ուստի եւ իմ անարժանութիւն թեպէտ եւ ըստ նորին արժանեաց եւ մեծի երախտեացն, զոր ունէր առ իս ոչ էր բաւական հատուցանել»: Ուրեմն Հեթում թագավորը առանձին վերաբերմունք է ունեցել Թորոս Ռոսլինի նկատմամբ, գնահատել և հովանավորել է նրան: Թորոս Ռոսլինը պետք է նույնպիսի վերաբերմունք ցուցաբերեր իր երախտավորի նկատմամբ և արքայական վերաբերմունքին արժանի հուշարձան ստեղծեր: Եվ նա ստեղծում է այդ հուշարձանը «ըստ հասութեան», այսինքն, «տիրապէս հասու լինելով», ըստ պատշաճին:

Սակայն մինչև ձեռագրի ավարտելը Կիլիկիան մեծ աղետի է ենթարկվում: Մամլուքների դեմ<sup>43</sup> Մառի ճակատամարտում Հեթում Ա. թագավորի Թորոս որդին զոհվում, իսկ անդրանիկ Լևոնը՝ գերվում է<sup>44</sup>:

Թորոս Ռոսլինի երախտավորի արքայական փառքին ավելացել էր մեծ վիշտ, «ըստ հասութեան» հուշարձան է կերտում «[պճնազար]դեալ ծաղկ- [երանգ բաղմա]կերպ պատ[կ]երագրութեամբ», որպեսզի «ընդ լսելոյ զլուր բանին կենաց, տեսցեն իբրեւ աշաւք իմն զտիպ նախահարցն եւ զփրկագործ տնարէնութիւն բանին Աստուծոյ մարմնացելոյ վասն [փրկութեան ազգի մարդկան]»:

Թորոս Ռոսլինը իր նախորդ և հետագայի, մեղ հայտնի ձեռագրերից ոչ մեկի հիշատակարանում այսպիսի խոստովանություն չի անում: Լավագույն

<sup>42</sup> Ն. Պողաբյան, Յուցակ ձեռագրաց Երուսաղէմի, հատոր. 2, էջ 529:

<sup>43</sup> «Մահմեդական բանակը հետապնդեց փախստականներին, ջարդելով և գերելով բոլոր նրանց, ում բռնում էր և ամեն կողմ հրդեհ էր տարածում... նա գրավեց մի շատ զորեղ ամրոց... տղամարդիկ բոլորն էլ խոզխոզվեցին, գերի առնված կանայք բաժանվեցին զինվորների մեջ... մտան Սիս քաղաք, հիմնահատակ քանդեցին այն: Այդ զավառում զորքը մնաց մի քանի օր, ամենուրեք տարածելով նախճիր ու հրդեհ, և վերցնելով բաղմամբիվ գերիներ»: Այնուհետև մամլուքների բանակի մի մասը գնում է դեպի հյուսիս, մյուսը՝ Սիս, Աղանա, Այաս և Տարսոն, «ջարդեցին բնակիչներին, գերիներ վերցրին, մեծ թվով բերդեր ավերեցին և ամեն ինչ հրդեհի մատնեցին», — գրում է արաբ պատմիչը («Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», թարգմ. Հ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 273):

<sup>44</sup> «Եւ արքայն Հեթում եմուտ ի սուգ և խոցեցաւ ի սրտի, և անկեալ ի ճանապարհ չոգաւ ի խանն մեծ և յանշափ ինչ արար, զի առեալ էած զնա ընդ իւր արամբք երկերիւր հազարօք ընդդէմ սուլթանին»: Վճռական ճակատամարտում պարտվում են մամլուքները, բայց մոնղոլական խանը կաշառվում է ընծաներ ընդունելով «էառ զբանակն, և դարձաւ երկիր իւր, կուրացեալ ի պարզեաց և յընծայից անտի աորերելոց, որպէս սովորեալ է դիպել յաճախ և այլոց բաղմաց:

Եւ արքայ Հեթում դարձ արար յաշխարհ իւր ի Հայաստան» («Հովհաննես Դարեկել, Ժամանակագրութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 19—21):

դեպքում «դանազան նիւթաւք եւ երփն երփն գունաւք վայելչացուցանել»<sup>45</sup> են պատվիրել նրան «կամ դանազան նիւթաւք, ընտրելագոյն ոսկով եւ երանգ երանգ գունով» ավարտել է ինքը<sup>46</sup>:

Հեթումի Ավետարանում Քորոս Ռոսլինը լայն լուսանցքներ էր թողել ազատ և անկաշկանդ լուսանցադարձեր նկարելու համար<sup>47</sup>: Ձեռագիրն ունեցել է սկզբում 26×36 սմ մեծություն, ուր գրադաշտի զբաղեցրած մասը համասար էր լուսանցքների տարածքին: Էջի այս չափսերը հնարավորություն են տվել արվեստագետին ամեն մի գրվագի մասին գրելիս, նաև համապատասխան նկար կերտել ցանկացած մեծությամբ, «ծաղկերանգ բազմակերպ պատկերագրութեամբ», սկսած լուսանցանկարից մինչև ամբողջական էջերը: Իսկ թե ինչու մնացած 39 թերթերում այդպիսի մի էջ կա միայն, հասկանալի է, որովհետև, նախ, միշտ էլ Հովհաննու Ավետարանը աղքատ է նկարազարդվում այն պատճառով, որ նախորդ Ավետարանների նույն գրվագները արդեն նկարված են, և երկրորդ, Ավետարանը հռոմեացիները հետևողականորեն ոչնչացրել են առաջին հերթին նկարները և նկարազարդ թերթերը:

Սիրարփի Տեր-Ներսիսյանը Հեթում Ա-ի Ավետարանը կապում է Վասակ արքաների Ավետարանի հետ և գտնում, որ դրանք նման են չափերով, գրատեսակով, գրչությամբ, թերթերի դասավորությամբ: Հեթումի ձեռագրում պահպանված երկու մանրանկարները նույնպես հիշեցնում են Վասակի Ավետարանի նկարազարդումները. «ուստի մենք կարող ենք վստահ լինել, որ մեր ձեռագիրը Հռոմկլայում գրվել է համարյա միևնույն ժամանակ, ինչ Հեթումի Ավետարանը, թերևս 1268 թ. հետո, Վասակի՝ ողջ-առողջ Կիլիկիա վերադառնալու առիթով»<sup>48</sup>:

45 Ն. Պողադյան, Ցուցակ ձեռագրաց նրուսաղեմի, հատոր Բ, 1967, էջ 18:

46 Ն. Պողադյան, Ցուցակ ձեռագրաց նրուսաղեմի, հատոր. 2, էջ 529:

47 Այժմ մազադաթյա որոշ թերթերում պահպանված ստորին լուսանցքների ամբողջությունից և արտաքին լուսանցքների կտրված ցարդերի չափումներից, հնարավոր է լինում վերականգնել ձեռագրի նախնական չափերը: Երկրորդ անգամ նորոգողները թերթերի լայն լուսանցքները ավելորդ շռայլություն են համարել և իրենց ավելացրած թղթի չափսերը մազադաթյա թերթերի համեմատությամբ փոքր են վերցրել: Կազմելուց հետո եզրահատել են ձեռագիրը, որին զոհ են գնացել համարյա բոլոր լուսանցադարձերը, որոնք գտնվում էին մազադաթյա ամբողջական թերթերի վրա, մինչդեռ անջատված մազադաթյա թերթերի վրայից կտրված և թղթի վրա ամրացրած լուսանցադարձերը ամբողջական են: Եզրահատման ժամանակ, բնականաբար, կարվել են նաև Հովհաննես Հիզանցու ավելացրած թերթերի եզրերից:

Արմատի լուսանցքը՝ 4, սյունամիջյանը՝ 3, արտաքին լուսանցքը՝ 6 սանտիմետր են, որոնց գումարը 13 սմ է: Սրան ավելացնենք գրադաշտի ընդհանուր լայնքը 13 (լուսաբանչուր սյունակը՝ 6,5 սմ) կստանանք թերթի լայնքը 26 սմ: Այսպիսով էջը Ռոսլինը բաժանել է երկու հավասար բաժինների՝ գրադաշտի և լուսանցքի:

Ստորին լուսանցքը՝ 6 սմ է: Հավանաբար նույնքան է եղել նաև վերին լուսանցքը: Գրադաշտի բարձրությունը 24 սմ է, ուրեմն թերթի երկարությունը՝ 36 սանտիմետր է:

48 Ս. Տեր-Ներսիսյան, նշվ. աշխ., էջ 42—43:

Վասակի Ավետարանը, անշուշտ, գրվել է Հեթումի Ավետարանից հետո: Գ. Հովսեփյանը հավանական է համարում Հեթումի «Ավետարանի ծագումը նշանակել 1266 թվի առաջին կիսամյակում» (էջ 10): Այդպես չէ, իհարկե: Ձեռագիրը մամուլների արշավանքից հետո է ավարտվել: Առն արքայորդին գերվել է 1266 թ. օգոստոսի 24-ին, որից ոչ այնքան ուշ պիտի ավարտված լիներ Հեթում Ա-ի Ավետարանը, որովհետև մինչև տարեվերջը Քորոս Ռոսլինը, Հռոմկլայում, ծաղկում է Ավետիք գրիչի Սսում գրած Մաշտոցը (միշտ է, հարուստ նկարազարդված չէ, ունի առանձին մազադաթի վրա ամբողջական 5 նկար, 4 գլխազարդ, 9 խորանազարդ):

Հաջորդ (1267) տարվա սկզբից, կաթողիկոսի պատվերով Թ. Ռոսլինը ձեռնարկում է մի

Այս ավետարանների նմանությունը հաստատելու համար շատ կարևոր է նորահայտ պատառիկներում «զտիպ նախահարցն» արտահայտությունը, որը վերաբերում է Քրիստոսի տոհմածառի նկարազարդմանը: Կոստանդին կաթողիկոսի 1262 թ. Ավետարանում նախահայրերը նկարված են ամբողջ էջով մեկ կլոր շրջանակների մեջ՝ վերից վար շորս շարքով, յուրաքանչյուրում վեց նրկար: Այդպես է և՛ Մաթևոսի, և՛ Ղուկասի Ավետարաններում: Այդպես չէ, սակայն, Վասակի Ավետարանը: Նախահայրերից յուրաքանչյուրը նկարված է լուսանցքում, բնագրի իր անվան դիմաց, դարձյալ կլոր շրջանակների մեջ: Նշանակում է նախահայրերի նկարելու այս կարգը Թորոս Ռոսլինը առաջին անգամ կիրառել է Հեթում Ա-ի Ավետարանը նկարազարդելիս, և երբ գրում է «տեսցեն իբրեւ աշաբ իմն զտիպ նախահարցն», այս նկարազարդումները պետք է հասկանալ:

Կոստանդին կաթողիկոսի Ավետարանի հիշատակարանում ոչ մի հիշատակություն չկա նախահայրերի նկարների մասին, որովհետև սովորական է եղել նրանց նկարելու եղանակն այստեղ, իսկ ահա Հեթումի Ավետարանում Թորոս Ռոսլինն առաջին անգամ յուրաքանչյուր նախահոր նկարը տեղադրում է բնագրի համապատասխան հատվածի դիմաց (ուր հիշատակված է տվյալ նախահայրը): Նկարների այդ շարքը, որ դրադեցրել է մի քանի էջերի լուսանցքները, ծառի տպավորություն է թողել և առանձին շուք է տվել լայնալուսանցք Ավետարանին:

Հեթումի և Վասակի Ավետարանները նման են նաև գրչության մեջ: Երկուսի մոտ էլ ընթերցվածները սկսվում են երեք տող ոսկեգրով, այնինչ Կոստանդին կաթողիկոսի Ավետարանում միայն երկու տող է: Երկուսում էլ չկա բառանջատում, անջատումը կատարվում է միայն կետեր դնելուց հետո: Իհարկե, բառանջատումը շուրջ երկու հարյուր տարի կիրառվում էր հայ գրչության արվեստում, և Թորոս Ռոսլինի բոլորգրված ձեռագրերում այդպես է: Դեռ ավելին, Թորոս Ռոսլինը հիանալիորեն կիրառում է գրադարձի օրենքները, և կանոնավոր են բոլոր տողադարձերը: Հեթումի Ավետարանը երկաթագրով գրելու հետ միասին, նա աշխատել է պահպանել նաև հին գրելաձևը, ավելի հարգի դարձնելու արքայական Ավետարանը, նմանեցնելով Հայոց նախորդ թագավորների երբեք ստացած ավետարաններին (գուցե ձեռքի տակ ունեցել է այդպիսի օրինակ), և բնականաբար, խախտել է նաև գրադարձի կանոնը:

Այդպես է նաև Վասակի Ավետարանում:

Թորոս Ռոսլինը հայ գրչության արվեստի կարկառուն ներկայացուցիչներից է: Արտակարգ ներդաշնակ են նրա ձեռագրերում գիրն ու նկարը, գիծն ու գույնը: Հիշատակարանից վերը բերված հատվածը, ձեռագիրը գեղարվեստորեն ձևավորելու անհրաժեշտության մասին Ռոսլինի ըմբռնումների արտահայտությունն է: Երևույթը ըմբռնելուն ինչքան շատ զգայարաններ մասնակցեն՝ այնքան ամբողջական և լիակատար կլինի ճանաչողությունը: Երբ լսելու հետ միասին տեսողական զգայարանն է մասնակցում, իսկ երբ նկարը բազմաբանգ է և ներգործուն, ճանաչողությունը ավելի կատարյալ է:

Ավետարան (ապրիլի 9-ին մահանում է կաթողիկոսը): Ձեռագիրն ավարտվում է 1268 թ. հունիսի 24-ին, և երեք օրվա ընթացքում փակվում է: Ստեղծագործության մասին Ռոսլինի ըմբռնումների արտահայտությունն է: Երևույթը ըմբռնելուն ինչքան շատ զգայարաններ մասնակցեն՝ այնքան ամբողջական և լիակատար կլինի ճանաչողությունը: Երբ լսելու հետ միասին տեսողական զգայարանն է մասնակցում, իսկ երբ նկարը բազմաբանգ է և ներգործուն, ճանաչողությունը ավելի կատարյալ է:

Թորոս Ռոսլինը այսպիսին է ոչ միայն մանրանկարչության, այլ նաև գրչության մեջ: Բոլոր տերունական բառերը նրա ձեռագրերում ոսկեգոծ են, որով շեշտվում, առավել ակնառու է դառնում նշված մատյանի բովանդակությունը: Ավետարանը՝ Սուրբ, Յիսուս, Քրիստոս, Աստուած, Տէր, Իսրայէլի, Նրուաղէմի մասին է: Հեթումի Ավետարանում ոսկեգոծ է գրված նաև Հայր բառը:

Մանրանկարչությունը օժանդակելու է գրին, ավելի ընկալելի դարձնելով միտքը, զաղափարը. «Վասն այնորիկ իմոյ անարժանութեան փցուն և ախմար գրչի Թորոսի, մականունն Ռուսլին կոչեցելոյ ըստ նախնեաց, հրամայէր զգործի գրչութեան ի կիր արկանել յաստուածային այս մատեան, որ և զարդարեալ ոսկով զտով և պատուական նիւթաւ»<sup>49</sup>:

Բոլորգրի մեջ մեծ վարպետ էր գրիչը. նրա էջերը թեթև են և դյուրընթեռնելի, տողերը՝ ազատ, գրերը հյութեղ: Ազատորեն օգտագործում է մյուս գրատեսակները: 1256 թ. Ավետարանում բոլոր ընթերցվածների առաջին տողերը ոսկեգոծ գրչագիր է: Նույն գրով են գրված նաև շատ նկարների մակագրությունները և ոսկեգիր հիշատակագրությունները: Օգտագործում է, շատ հազվագեպ, նաև շղագիրը, որպես նկարների մակագրություն՝ գրված վրձինով, իսկ բազմատեսակ զարդագրերը գրչությունը կապում են մանրանկարչության հետ: Փաստորեն Թորոս Ռոսլինի ձեռագրերում մենք տեսնում ենք օգտագործված չորս գրատեսակ, այսինքն՝ բոլորը, ինչ այն ժամանակ գոյություն ունեւ հայ գրչության արվեստի մեջ: Բոլորգրի համատարած գերիշխանության պայմաններում, երբ երկաթագիրը զաղարել էր գրչության մասսայական գիր լինելուց, որով այլևս ամբողջական ձեռագրեր չէին գրում, այլ օգտագործվում էր որպես զխագիր և զարդագրի հենք, և գեղեցկության համար առանձին տողեր ու հիշատակագրություններ էին գրում, Թորոս Ռոսլինը XIII դարի երկրորդ կեսին երկաթագրով ամբողջական ձեռագրեր էր գրում: Նվ գրում էր՝ պահպանելով երկաթագրի գրչության հնագույն կանոնները:

Թորոս Ռոսլինը իրավացիորեն իրեն համարում է գրիչ՝ ներկայացուցիչ գրչության արվեստի: Մանրանկարչությունը գրչության ընդհանուր արվեստի մի մասն էր, որը պետք է ծառայեր գրին, բանին, ինչպես ինքը բառացի ասում է. «Որպէս զի ընդ լսելոյ զլուր բանին կենաց, տեսցեն իբրև աշաւ իմն զտիպ նախահարցն...»:

Գևորգ Սկևռացու աշակերտները նրան, որպես գրչության արվեստի տեսական և գործնական վարդապետի զրվատում են, որ նա միաժամանակ օգտագործում է հայրենի բոլորգրի հետ միասին նաև հին աղյուսակ գիրը կամ գրչագիրը, ինչպես և երկաթագիրը և զարդագիրը: Այդ բոլորը մինչ այդ մենք տեսնում ենք Թորոս Ռոսլինի մոտ: Գևորգ Սկևռացու ղեկավարությամբ գրված Հեթում Բ-ի Ճաշոցի ընթերցվածների առաջին երեք տող ոսկեգիրը նույնպես առնված է Թորոս Ռոսլինի Հեթում Ա-ի և Վասակի Ավետարաններից, միայն Ճաշոցում երեք տողը հաճախ գրվում է երեք տարբեր գրատեսակներով՝ երկաթագիր, գրչագիր և բոլորգիր:

Թորոս Ռոսլինից առաջժամ հայտնի են շուրջ տասը ձեռագիր, որոնցից վեցում հիշվում է Թորոս Ռոսլին անունը, յոթերորդում՝ միայն Թորոս անունը, մյուս երեքը հիշատակարան չունեն, սակայն ըստ մանրանկարների ոճի կարե-

<sup>49</sup> Մատենադարան, ձեռ. № 10450, էջ 403ա:

լի է վերագրել Թորոս Ռոսլինի դպրոցին. դրանք Հեթում Ա. Թագավորի (Մատենադարան № 5458), Վասակ արքաներ (Ֆրեսկո № 3218) և Մատենադարանի № 8321 Ավետարաններն են: Տասը ձեռագրերից երեքը գրված են այլ գրիչների կողմից, մյուս յոթի գրիչն ու նկարիչը Թորոս Ռոսլինն է, ընդ որում դրանցից երեքը գրված են երկաթագրով, մյուսները՝ բոլորգրով: Մեկական ձեռագիր ստացել են Հեթում Ա., Լևոն Գ. Թագավորները, Վասակ արքաները, Կիրաննա իշխանուհին և Վարդան եպիսկոպոսը. մնացած հինգը ստացել են Կոստանդին կաթողիկոսը և նրա եղբորորդի Թորոսը և նվիրել են ուրիշների:

Հռոմկլայի Հայոց կաթողիկոսարանը մեծ և հարուստ մատենադարան ուներ, որ գոյացել էր ոչ միայն տեղի գրչության դպրոցի ստեղծագործություններից ու ընդօրինակություններից, այլ Թագավորների, իշխանների և այլոց առատ նվիրատվություններից: Բնականաբար Հռոմկլայի մատենադարանում շատ պետք է լինեին տեղի դպրոցի խոշորագույն ներկայացուցիչ Թորոս Ռոսլինի ստեղծագործություններից:

Հովհաննես Երզնկացին նկարագրելով 1292 թ. մամուլների կողմից Հռոմկլայի կործանումը, գրում է, որ թշնամիները մանրեցին «զբար բերդին իրրե զհող. առին զգեղապաճոյճ ամուրն պանծալի, սպանին... զինուորսն բերդին, գերեցին և աստուածային սուրբ Կտակարանսն, որ ի բազում ամաց ամբարեալ էր ամենայն կաթողիկոսացն և Թագաւորաց... և զԱւետարանսն ոսկեառաւ մանրեալ փշրեցին...»<sup>50</sup>:

Անկասկած է, որ դրանց մեջ էին նաև Թորոս Ռոսլինի ոսկեառաւ Ավետարանները:

А. А. МАТЕВОСЯН

## ВНОВЬ НАЙДЕННЫЕ ЧАСТИ ЕВАНГЕЛИЯ ЦАРЯ ГЕТУМА I, ПЕРЕПИСАННОГО И ИЛЛЮСТРИРОВАННОГО ТОРОСОМ РОСЛИНОМ

(Резюме)

Рукопись № 5458 Матенадарана им. Маштоца была включена в фонды хранилища в 1915 г. и очень скоро привлекла к себе внимание специалистов. Дело в том, что 274 листа (из 312-ти) этого Евангелия, написанные болоргиром на бумаге и украшенные портретами евангелистов, маргиналами и орнаментированными инициалами, были дополнены тридцатью девятью листами Евангелия, переписанного в 1266 г. в Ромкла на отборном пергамене; часть этих листов снабжена замечательными орнаментированными инициалами, маргиналами, золотыми буквами и двумя иллюстрациями на полях. Как явствует из дефектной памятной записи, заказчиком был католикос Константин, а получателем — царь Гетум I. Г. Овсепян опубликовал статью о рукописи лишь в

<sup>50</sup> Տ. Պալյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի և Ս. Դանիէլի ի Կեօսրիա, Վիեննա, 1963, էջ 57:

1949 году, когда у него под рукой было достаточно материалов об армянской миниатюре и доказал, что Евангелие царя Гетума I, часть которого составляют эти 39 пергаменных листов, переписано и иллюстрировано Рослином. Тер-Нерсисян также считает, что иллюстрации на тридцати девяти пергаменных листах принадлежат кисти Рослина. Е. Никольская, обратив внимание на бумажную часть рукописи, уточнила, что иллюстратором ее был Ованнэс Хизанци, живший на рубеже XIV и XV вв.

Среди фрагментов Матенадарана под номером 1454 занесены половинки двух листов, считавшихся памятной записью Служебника. В конце прошлого века эти фрагменты были доставлены из Васпуракана и включены в фонды хранилища. Исследование показало, что они являются частями памятной записи не Служебника, а Евангелия, именно Евангелия царя Гетума I. Изучение рукописи и памятной записи вновь подтвердило, что переписал Евангелие царя Гетума I и иллюстрировал его Торос Рослин. Оно было посвящено сорокалетию воцарения Гетума, а следовательно и основанию династии Гетумидов и было выполнено с искусством, достойным юбилея и юбиляра. Эта рукопись — наиболее великолепное творение пера и кисти Рослина; приблизительным его повторением, как справедливо замечает С. Тер-Нерсисян является Евангелие Васака — брата царя.

Царская рукопись была разодрана и изрезана мечами во время третьего нашествия Тамерлана в 1400 г. Ее выкупил чернец Ованнэс, а в 1401 г. писец и художник Ованнес Хизанци произвел ее реставрацию в Хизане. В это время рукопись имела 35 целых, 80 залатанных и 187 бумажных листов. В конце XV в. залатанные листы (кроме трех) были удалены из рукописи; они были заменены бумагой, к которой приклеены маргиналы и орнаментированные инициалы отделенных пергаменных листов. В таком виде рукопись дошла до нас. По-видимому, в то же время были отделены обе части памятной записи, которые затем использовались в качестве защитных листов. В середине XIX в. они были вновь отделены от рукописи, и в таком виде существовали до последнего времени.

A. MATHÉVOSSIAN

# LES PARTIES NOUVELLEMENT DÉCOUVERTES DE L'EVANGILE DU ROI HÉTOUM IER COPIÉ ET ENLUMINÉ PAR THOROS ROSLINE

(R é s u m é)

Le manuscrit № 5458 du Maténadaran Machtotz a été inclus dans les fonds du dépôt en 1915 et il a tout de suite attiré l'attention des spécialistes. Il s'agit du fait que 274 feuillets (de 312) de cet Evangile,

écrits en bolorguir sur du papier et décorés des portraits des évangélistes, de marginaux et d'initiales ornementées, ont été complétés par trente-neuf feuillets d'un Evangile copié en 1266 à Hromkla sur du parchemin de choix; une partie de ces feuillets sont décorés d'étonnantes initiales ornementées, de marginaux, de lettres d'or et de deux enluminures dans les marges. Comme on l'apprend du colophon défectueux le commanditaire en a été le catholicos Constantin et le réceptionnaire le roi Hétoum I<sup>er</sup>. G. Hovsépian n'a publié un article sur ce manuscrit qu'en 1949, quand il disposait de suffisamment de matériaux relatifs à la miniature arménienne et il a démontré que l'Evangile du roi Hétoum I<sup>er</sup>, dont ces 39 feuillets en parchemin constituent une partie, a été copié et enluminé par Rosline. S. Der-Nersessian considère aussi que les enluminures des 39 feuillets de parchemin appartiennent au pinceau de Rosline. E. Nikolskaya, ayant étudié la partie en papier du manuscrit, a précisé que l'enlumineur en a été Hovhannes Khizantsi qui a vécu à la limite des XIV<sup>e</sup> et XV<sup>e</sup> siècles.

Parmi les fragments conservés au Maténadaran sous le numéro 1454 on garde les moliés de deux feuillets tenus pour le colophon d'un Missel. A la fin du siècle dernier ces fragments ont été apportés du Vaspourakan et versés dans le fonds du dépôt. L'examen a montré qu'ils sont une partie du colophon non d'un Missel, mais d'un Evangile et plus exactement de l'Evangile du roi Hétoum I<sup>er</sup>. L'étude du manuscrit et du colophon a confirmé que l'Evangile du roi Hétoum I<sup>er</sup> a été copié et enlumine par Thoros Rosline. Il était consacré au quarantième anniversaire du règne de Hétoum et, par conséquent, de la fondation de la dynastie des Hétoumides et avait été exécuté avec un art digne du jubilé. Ce manuscrit est l'oeuvre la plus splendide appartenant à la plume et au pinceau de Rosline: comme le note légitimement S. Der-Nersessian l'Evangile de Vassak, frère du roi, est sa répétition approximative.

Le manuscrit royal a été déchiré et coupé en morceaux à l'époque de la troisième invasion de Tamerlan en 1400. Le moine Hovhannes l'a racheté et le scribe et enlumineur Hovhannes Khizantsi l'a restauré en 1401 à Khizan. A cette époque le manuscrit avait 35 pages entières, 80 pages racommodées et 187 pages en papier. A la fin du XV<sup>e</sup> siècle les pages racommodées (sauf trois) ont été enlevées du manuscrit; elles ont été remplacées par du papier sur lequel on a collé les marginaux et les initiales ornementées des feuillets en parchemin. Dans cet état le manuscrit est arrivé jusqu'à nous.

C'est probablement à cette même époque que les deux parties du colophon ont été séparées et par la suite utilisées comme feuilles de garde. Vers le milieu du XIX<sup>e</sup> siècle elles ont été à nouveau séparées du manuscrit, sont devenues des fragments et de cette manière elles sont arrivées jusqu'à nous.